



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 441-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան. Քաղաքացի Աղասի Սպիրիդոնի Բանգոյանը /հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Շահումյան 4-րդ փողոց, 33 տուն, ՀԾՀ՝ 3507640236/, հանդիսանալով անշարժ գույքի և հողի հարկ վճարող սուբյեկտ, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել հողի հարկ և անշարժ գույքի հարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2023 թվականի մարտի 28-ին թիվ 1029 զեկուցագրի հիման հիմա, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ հողի հարկի և անշարժ գույքի հարկի գումարի գանձման հարցի քննության նպատակով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները՝ վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.
2. Վարչական ակտը ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը. Համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ կողմից տրված տվյալների՝ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի նկատմամբ Աղասի Սպիրիդոնի Բանգոյանի հարկային պարտավորությունները 28.03.2023 թվականի տեղեկանքների դրությամբ ընդհանուր կազմում են 384.965 /երեք հարյուր ութսունչորս հազար ինը հարյուր վաթսունհինգ/ ՀՀ դրամ, որից 349.738 /երեք հարյուր քառասունինը հազար յոթ հարյուր երեսունութ/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0084-0008-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի գծով հարկային պարտավորության գումար (175.248 /մեկ հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր քառասունութ/ ՀՀ դրամը՝ որպես 2023 թվականի համար հաշվարկված հարկի չվճարված մաս, 164.672 /մեկ հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 9818 /ինը հազար ութ հարյուր տասնութ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), և 33.978 /երեսուներեք հազար ինը հարյուր յոթանասունութ/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0084-0014-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի գծով հարկային պարտավորության գումար (12.359 /տասներկու հազար երեք հարյուր հիսունինը/ ՀՀ դրամը՝ որպես 2023 թվականի դրությամբ հաշվարկված հարկի չվճարված մաս, 19.421 /տասնինը հազար չորս հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 2198 /երկու հազար մեկ հարյուր իննսունութ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), իսկ հողի հարկի գծով 1077 /մեկ հազար յոթանասունյոթ/ ՀՀ

դրամը՝ որպես 04-098-084-008 կադաստրային ծածկագրով հողի 2020 թվականի համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (838 /ուր հարյուր երեսունութ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 239 /երկու հարյուր երեսունինը/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) և 172 /մեկ հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-084-014 կադաստրային ծածկագրով հողի հարկի գծով 2020 թվականի դրությամբ հաշվարկված պարտավորության գումար (134 /մեկ հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 38 /երեսունութ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ): 2023 թվականի մարտի 28-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի հիմքով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանում հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հուլիսի 11-ին հրավիրվել է վարչական վարույթի լուծ, որին մասնակցելու նպատակով Աղասի Սպիրիդոնի Բանգոյանին հասցեագրված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 12.05.2023 թվականի թիվ 1371 և 13.06.2023 թվականի թիվ 1743 ծանուցումներն ուղարկվել են փոստով, ինչպես նաև ծանուցվել է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով azdarar.am կայքում հրապարակելու միջոցով, սակայն Աղասի Բանգոյանը վարչական վարույթի նիստին չի ներկայացել, ուստի վարչական վարույթի լուծումներն իրականացվել են վերջինիս բացակայությամբ:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը. ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ»: Համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ «հարկ վճարող է համարվում կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նոտար), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն»: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ «հարկի վճարումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ 0.04 տոկոսի չափով»: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 45-րդ գլխի պահանջներով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ, 53-րդ, 58-60-րդ և 88-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Աղասի Սպիրիդոնի Բանգոյանին /հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Շահումյան 4-րդ փողոց, 33 տուն/ հասցեագրվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 12-ի թիվ 1371 ծանուցումն ու 2023 թվականի հունիսի 13-ի թիվ 1743 ծանուցումը, ինչպես նաև վերջինիս ծանուցվել է azdarar.am ինտերնետային կայքէջում տեղադրելու միջոցով, որով հրավիրվել է մասնակցելու վարչական վարույթի լուծմանը, սակայն չի ներկայացել վարչական վարույթի նիստին, և վարչական վարույթի քննարկման մասին 2023 թվականի հուլիսի 11-ի արձանագրությունը՝ որոշում են.

1. Քաղաքացի Աղասի Սպիրիդոնի Բանգոյանից հոգուտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջե գանձել ընդհանուր՝ 384.965 /երեք հարյուր ութսունչորս հազար ինը հարյուր վաթսունհինգ/ ՀՀ դրամ, որից 349.738 /երեք հարյուր քառասունինը հազար յոթ հարյուր երեսունութ/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0084-0008-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի գծով հարկային պարտավորության գումար (175.248 /մեկ հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր քառասունութ/ ՀՀ դրամը՝ որպես 2023 թվականի համար հաշվարկված հարկի չվճարված մաս, 164.672 /մեկ հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 9818 /ինը հազար ութ հարյուր տասնութ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), 33.978 /երեսուներեք հազար ինը հարյուր յոթանասունութ/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-0084-0014-001 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի գծով հարկային պարտավորության գումար (12.359 /տասներկու հազար երեք հարյուր հիսունինը/ ՀՀ դրամը՝ որպես 2023 թվականի դրությամբ հաշվարկված հարկի չվճարված մաս, 19.421 /տասնինը հազար չորս հարյուր քսանմեկ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 2198 /երկու հազար մեկ հարյուր իննսունութ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) վճարման հաշվի համար՝ 900325005958, իսկ հողի հարկի գծով 1077 /մեկ հազար յոթանասունյոթ/ ՀՀ դրամը՝ որպես 04-098-084-008 կադաստրային ծածկագրով հողի 2020 թվականի համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (838 /ութ հարյուր երեսունութ/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 239 /երկու հարյուր երեսունինը/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) և 172 /մեկ հարյուր յոթանասուներկու/ ՀՀ դրամը՝ որպես 04-094-084-014 կադաստրային ծածկագրով հողի հարկի գծով 2020 թվականի դրությամբ հաշվարկված պարտավորության գումար (134 /մեկ հարյուր երեսունչորս/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 38 /երեսունութ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191048/:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելուց օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ azdarar.am կայքի և/կամ Փարաքարի համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

4. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023թ. հուլիսի 18
գ.Փարաքար



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒՆԻՍԻ 2023թվականի N 442-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Արայիկ Նիկոլայի Մարտիրոսովի /ծնված՝ 23.02.1974թ., անձնագիր՝ AT0379363, տրված՝ 07.02.2020թ. 057-ի կողմից, հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Թաիրով բնակավայր, Վ. Մամիկոնյան փողոց, 9 տուն հասցեում, ՀՇՀ՝ 3302740131/ 2023 թվականի մայիսի 25-ի ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանին ներկայացված՝ Փարաքար համայնքի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց կազմելու վերաբերյալ թիվ 1857 դիմումը՝ որոշում եմ.

- Արայիկ Նիկոլայի Մարտիրոսովի հետ կնքել հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույց՝ 6 ամիս ժամկետով՝ համաձայն կից հավելվածի:
- Արայիկ Մարտիրոսովից գանձել ընդհանուր **227.770 /երկու հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ՝** որպես 34AF510 հաշվառման համարանիշի, BMW 520 I մակնիշի, WBAHB51000BD08752 նույնականացման համարի փոխադրամիջոցի գույքահարկի գծով 11.04.2023 թվականի դրությամբ հաշվարկված հարկային պարտավորության գումար, որից **154.627 /մեկ հարյուր հիսունչորս հազար վեց հարյուր քսանյոթ/ ՀՀ դրամը՝** որպես 2016-2020 թվականների դրությամբ հաշվարկված պարտավորության գումար (110.830 /մեկ հարյուր տասը հազար ութ հարյուր երեսուն/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 43.797 /քառասուներեք հազար յոթ հարյուր իննսույնյոթ/ ՀՀ դրամը՝ որպես տույժ), իսկ **73.143 /յոթանասուներեք հազար մեկ հարյուր քառասուներեք/ ՀՀ դրամը՝** որպես 2021-2023 թվականների համար հաշվարկված հարկային պարտավորության գումար (67.500 /վաթսույնյոթ հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամը՝ որպես ապառք, իսկ 5643 /հինգ հազար վեց հարյուր քառասուներեք/ ՀՀ դրամը՝ որպես տույժ) /վճարման հաշվի համար՝ 900325191022/:
- Սույն որոշմանը կից հավելվածով սահմանված ժամանակացույցի վճարման ժամկետները խախտելու դեպքում Արայիկ Նիկոլայի Մարտիրոսովի նկատմամբ հարուցել վարչական վարույթ:
- Որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին Արայիկ Մարտիրոսովին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 443-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՅՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխով և Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի «Համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 13-Ն հրամանի 11 կետով.
Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (3.1-21) համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2023 թվականի օգոստոսի 23-ին ժամը 11:00-ին անցկացնել մրցույթ:
2. Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Գայանե Մանուկյանին՝ կազմել մրցույթի հայտարարության տեքստը և այն հրապարակել azdarar.am ինտերնետային կայքում:
3. Մրցույթների անցկացման տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար լիազորված անձ նշանակել Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի Քարտուղարության, անձնակազմի կառավարման, հասարակայնության, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի առաջատար մասնագետ Աիդա Սարգսյանին:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023թ. ՀՈՒԼԻՍԻ 19
գ. Փարաքար





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒԼԻՍԻ 2023թվականի N 444-Ա
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հերմինե Ժորժիկի Առաքելյանի նկատմամբ /հաշվառված՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, Թաիրով բնակավայր, Մեքենագործների փողոց, 2-րդ շենք, 19 բնակարան հասցեում, ՀԾՀ՝ 8009800937/ 2023 թվականի փետրվարի 20-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով հարուցված վարչական վարույթի արդյունքում ընդունվել է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի՝ փոխադրամիջոցի գույքահարկի գումարի գանձման պահանջ ներկայացնելու մասին 2023 թվականի մայիսի 30-ի թիվ 315-Ա որոշումը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի կողմից 14.07.2023 թվականի դրությամբ տրված տեղական հարկի պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը, առ այն, որ Հերմինե Առաքելյանը ամբողջությամբ կատարել է ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի բյուջեի նկատմամբ ունեցած հարկային պարտավորությունը՝ որոշում եմ.

1. Կարճել Հերմինե Ժորժիկի Առաքելյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ որոշումն ուժի մեջ մտնելուց օրվանից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ azdarar.am կայքի և /կամ Փարաքարի համայնքապետարանի տեղեկագրերում հրապարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հուլիսի 2023 թվականի N 445-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՔԱՆԴԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՊՕՐԻՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

1. Վարչական ակտով լուծվող հարցի նկարագրությունը.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Դեմիրճյան թաղամասի 5-րդ փողոցի 16 հասցեի կից տարածքում, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքին պատկանող ընդհանուր օգտագործման հողամասում, ճանապարհի վրա առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության, կառուցվել է ընդհանուր 400.0 քմ մակերեսով քարե պարիսպ և շինություններ, որով ծանրաբեռնվել է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը:

Խախտելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջները, առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Դեմիրճյան թաղամասի 5-րդ փողոցի 16 հասցեի հարակից տարածքում, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքին պատկանող ընդհանուր օգտագործման հողամասում, ճանապարհի վրա կառուցվել է ինքնակամ կառույց՝ քարե պարիսպ և շինություններ, ինչի կապակցությամբ Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հ. Միքաելյանի 22.06.2023թ. տեղազննության արձանագրության և 22.06.2023թ. թիվ 2323 զեկուցագրի հիման վրա 2023 թվականի հունիսի 22-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի և նույն օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2023 թվականի հուլիսի 18- ին հրավիրվել է վարչական նիստ, որի մասին ծանուցումը Նշան Իլոյանին և Մարալ Մանուշյանին ուղարկվել է փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ /28.06.2023թ. թիվ 1966 /փոստային առաքանի՝ ALO110151560AM/ և 07.07.2023թ.թիվ 2074 ծանուցումները փոստով՝ ստանալու մասին ծանուցմամբ, ինչպես նաև ծանուցվել է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված կարգով azdarar.am կայքում հրապարակելու միջոցով/:

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի վարչական հանձնաժողովը (այսուհետ հանձնաժողով) հրավիրել և անցկացրել է նիստ, որին չեն ներկայացել Նշան Իլոյանը և Մարալ Մանուշյանը:

2. Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը. Վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում ձեռք բերված ապացույցներով, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը՝
 - 1) Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետի 22.06.2023թ. թիվ 2323 զեկուցագրի համաձայն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար Թաիրով գյուղի Դեմիրճյան թաղամասի 5-րդ փողոցի 16 հասցեի հարակից տարածքում՝ Փարաքար համայնքին պատկանող ընդհանուր օգտագործման հողամասում, ճանապարհի վրա առանց հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության ապօրինի կառուցվել է քարե պարիսպ և շինություններ, որը տնօրինում են Մարալ Մանուշյանը և Նշան Իլյանը, դրանով ծանրաբեռնված հողամասը փաստացի օգտագործվում է ապօրինի, քանի որ այդ հողամասի նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ իրավունք, վերոնշյալ կառույցն իրականացվել է ընդհանուր օգտագործման հողամասում, փողոցի վրա, խոչնդոտում է այլ հողատերերի տեղաշարժին, գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը և ենթակա չեն օրինականացման.
 - 2) Վարչական հանձնաժողովի 2023 թվականի հուլիսի 18-ի արձանագրությունը:
 - 3) Վերոնշյալ ինքնակամ շինությամբ փաստացի ծանրաբեռնված է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը, ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանով ծանրաբեռնված ինքնակամ շինությունից.
 - 4) Առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացված վերոնշյալ հասցեի շինությունը գտնվում է ընդհանուր օգտագործման հողամասի՝ փողոցի վրա, ինչից բխում է, որ շինարարության իրականացումը և ներկայումս շինության պահպանումը կարող է վտանգ ներկայացնել անձանց կյանքին և առողջությունը, այսինքն՝ վարչական ակտն ընդունելու հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացմանը:
3. Վարչական ակտն ընդունելու հիմնավորումը.

Համաձայն քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքը, շինությունը կամ այլ կառույցը:

Նույն հոդվածի 1.1. մասի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման):

Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնակամ կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնակամ կառույցի օգտագործման ու ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ 3. Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնակամ կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները:

Ուրիշի հողամասում գտնվող ինքնակամ կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին:

Ուրիշի հողամասում ինքնակամ կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը:

ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ. 912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնակամ կառույցները՝

- 1) որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.
- 2) որոնք կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք...

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակայված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելումը, կասեցնում է ինքնակամ շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնակամ կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը.

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի՝ լսումներ չեն անցկացվում, եթե անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելով արչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացմանը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՀ Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ. 912-Ն որոշման պահանջները՝ **որոշում եմ.**

5. Չօրինականացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Դեմիրճյան թաղամասի 5-րդ փողոցի 16 հասցեի հարակից տարածքում, ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման 400,0քմ մակերեսով հողամասում՝ ճանապարհի վրա, առանց

հողօգտագործման իրավունքի և առանց համապատասխան թույլտվության կառուցված քարե պարիսպը և շինությունները:

6. Զգուշացնել Նշան Իլոյանին և Մարալ Մանուշյանին սեփական միջոցներով 20 օրյա ժամկետում քանդելու ինքնակամ կառույցը և համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն ազատել անօրինական տիրապետումից:
7. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի «Բարեկարգում» տնօրինությանը՝ քաղաքացի Նշան Իլոյանի և Մարալ Մանուշյանի կողմից սույն որոշման 2-րդ կետով նախատեսված պահանջները չկատարելու դեպքում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի և հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ քանդել, ապամոնտաժել համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողամասում կառուցված քարե պարիսպն ու շինությունները, անօրինական տիրապետումից ազատել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը:
8. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին, ապահովել սույն որոշման 3-րդ կետով սահմանված դեպքում նախատեսված ապամոնտաժման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձելը:
5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:
6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժինը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշոփվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից, azdarar.am կայքի և /կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 446-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով, հիմք ընդունելով հողամասի սեփականատեր՝ Մուշեղ Մարգարյանի 2023 թվականի ապրիլի 5-ի դիմումը. **որոշում եմ՝**

1. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան գյուղի վարչական սահմաններում գտնվող ՝ Մուշեղ Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող 04-065-0503-0213 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասին տալ հասցե. ՀՀ Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Մերձավան, 7-րդ փողոց N 4/3 հողամաս:

2. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԴԱԿԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

2023 թ. հուլիսի
գ. Փարաքար





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 6-00-42, 060-53-00-42 info@parakar.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒԼԻՍԻ 2023 թվականի N 447-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԱՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի երկրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման պահանջներով, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, շինության զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով շենքի շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը տրված 11 հուլիսի 2023թ.-ին «ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ-ի կողմից, հողամասի և շինության հատակագծերը՝ տրված «ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից, ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից 2023 թվականի մայիսի 10-ին տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023SLXHDP), շինությունը կատարած անձ Մամբրե Վարդանի Սարգսյանի 2023 թվականի հուլիսի 11-ի N 2693 դիմումը. **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում գտնվող, 24.0 քառակուսի մետր մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա գտնվող 24.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով կիսակառույց շինությունը ճանաչել Փարաքար համայնքի սեփականությունը և օրինականացնել՝ համաձայն «ՄԱԼԽԱՍՅԱՆՑ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագծերի:

2. Հողատարածքին և առկա շինությանը տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Փարաքար համայնք, գյուղ Փարաքար, Երևանյան փողոց 36 կիսակառույց շինություն (ծածկագիր 04094UCYJ8ZN):

3. Հաշվի առնելով, որ կառույցն իրականացվել է Մամբրե Վարդանի Սարգսյանի կողմից և ընդունվել է առաջարկը՝ գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու հողամասը և շինությունը, Մամբրե Վարդանի Սարգսյանին ուղղակի վաճառքով օտարել Արմավիրի մարզ, Փարաքար համայնքի, Փարաքար գյուղի Երևանյան փողոցի 36 հասցեում գտնվող 0,0024 հա մակերեսով հողամասը՝ առկա շինություններով:

4. 24,0 քառակուսի մետր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխել, որպես հասարակական կառուցապատման հող: Համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

5. Ինքնակամ կառույցի օրինականացման և վաճառքի համար վճարը սահմանվում է յուրաքանչյուր մեկ քառակուսի մետր կիսակառույց շինության համար՝ 20 844 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 500 256 (հինգ հարյուր հազար երկու հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ, որը ենթակա է վճարման Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին:

